ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

12.05.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 424-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի 2025թվականի ապրիլի 23-ի N 383-Ա, N 384-Ա և N 385-Ա որոշումները,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություն և գույքացանկից հանել.

    1) KIA OPTIMA 2.4 մակնիշի ավտոմեքենան (հաշվառման համարանիշը՝ 493 CR 61, սեփականության վկայական՝ N 14YY516012, թողարկման տարեթիվը՝ 2012թ.),
    2) VAZ 21214-120-20 մակնիշի ավտոմեքենան (հաշվառման համարանիշը՝ 921 LL 70, սեփականության վկայական՝ N 14XX048845, թողարկման տարեթիվը՝ 2006թ.),
    3) GAZ 31105 մակնիշի ավտոմեքենան (հաշվառման համարանիշը՝ 701 CX 61, սեփականության վկայական՝ N 14YY848671, թողարկման տարեթիվը՝ 2008թ.):

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները ներկայացնել համայնքի ավագանու առաջիկա նիստի հաստատմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. մայիսի 12
ք. Գորիս